ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐ

(2024-2025 ուստարի)

Ողջո՛ւյն, սիրելի՛ մասնակից
Հայ գրականության օլիմպիադան նվիրվում է Ծմակուտի քուրմի՝ Հրանտ Մաթևոսյանի ծննդյան 90-ամյակին, և քանի որ տարին հայտարարվել է Մաթևոսյանական, դու էլ սրբազան աղոթքով խնկարկի՛ր նրա անմահությանը։

«Գրականություն պետք է մտնել պատասխաններով։ Պատասխաններով»։
Հրանտ Մաթևոսյան

11-րդ դասարան

1. Ո՞վ է Հարդագողի ճամփորդը։ Ե՞րբ է գրել իր նշանավոր ասք-պոեմը՝ պոեմանման վեպը, հայրենի քաղաքի մասին։ Ի՞նչ է նրա համար իր քաղաքը, որը, բնականաբար, ողջ Հայաստանն է։ Գրի՛ր հեղինակի ճարտասանական հարցը։

10 մ.

2. Ո՞վ է ասույթի հեղինակը.«Մայր ըլլալ և բանաստեղծ ըլլալ միևնույն բանն է՝ երկուքն էլ արյունելով կը բաժնվին և կ՝անմահանան ուրիշ էակներու մեջ»։ Ի՞նչ շրջասույթով է բնութագրվում քերթողը և ի՞նչն է փառաբանում նահատակությունից առաջ։ Այդ շարքից վերլուծի՛ր մեկ բանաստեղծություն։

10 մ.

3. Վերլուծի՛ր Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքը։ Ներկայացրո՛ւ հեղինակի դիրքորոշումը դաշտի նկատմամբ. բնության օրենքը մարդու ընկալմամբ։

10 մ.

4. Գրի՛ր որևէ ասույթ կամ քառյակ հմուտ, հանճարեղ լոռեցու մասին։ Խոսի՛ր նրա անզուգական արձակի մասին. վերլուծի՛ր որևէ հեքիաթ կամ պատմվածք (**հուշում՝** ***Գիքորը, Գելը, Մայրը, Քաջ Նազարը, Անբան Հուռին*** **և այլն**)։

10 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան